Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2022-2024 թվականների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նպատակով աուդիտորական ընկերության ընտրության հրապարակային մրցույթի կազմակերպման մասին

2022-06-28

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհուրդ

Որոշում թիվ 113 Լ
28.06.2022

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2022-2024 թվականների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նպատակով աուդիտորական ընկերության ընտրության հրապարակային մրցույթի կազմակերպման մասին

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 հունիսի 15-ի թիվ 154 որոշումը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 16-րդ հոդվածի կիրարկումն ապահովելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո ր ո շ ու մ է.

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2022-2024 թվականների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նպատակով միջազգային ճանաչում ունեցող անկախ աուդիտորական ընկերության ընտրության համար հայտարարել հրապարակային մրցույթ:

Հավանություն տալ մրցույթի հայտարարության տեքստին:

Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հասարակայնության հետ կապերի ծառայությանը՝ կազմակերպել մրցույթի

հայտարարության տեքստի հրապարակումը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային տնային էջում և կայքում:

Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Գլխավոր քարտուղարությանը՝ ստեղծել աշխատանքային խումբ՝ մրցույթի մասնակիցների կողմից ներկայացվող տեղեկությունները և փաստաթղթերը ուսումնասիրելու և ամփոփելու նպատակով:

Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Ներքին աուդիտի վարչության վրա:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով:

Հայտարարություն

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Հովհաննես Խաչատրյան

2022 թ. հուլիսի 11, ք. Երևան